ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 18 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 2083-Ա ԵՎ 2085-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերի համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Քրեական հետախուզության գլխավոր վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 2083-Ա և «Կազմակերպված

հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 2085-Ա հրամանները:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

« 01 » 11 2024թ.

ք. Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի
2024թ. նոյեմբերի « 01 »
թիվ 18-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) Նախարարության ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) կենտրոնական ապարատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Գլխավոր վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի հրամաններով:

3. Գլխավոր վարչության կանոնադրությունը և ներքին կառուցվածքը հաստատում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալը (այսուհետ՝ Ոստիկանության պետ):

4. Գլխավոր վարչությունը ստեղծվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Գլխավոր վարչության ծառայողների և աշխատակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքներով, «Քրեական դատավարության» օրենսգրքով, ինչպես նաև Ոստիկանության պետի կողմից հաստատված տվյալ պաշտոնի անձնագրով:

6. Գլխավոր վարչության անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն.

2) ռուսերեն՝ Главное управление криминальной полиции Полиции Министерства внутренних дел Республики Армения.

3) անգլերեն՝ General Department of Criminal Police of the Police of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia.

4) ֆրանսերեն՝ Département général de la police criminelle de la Police du Ministère de l'Intérieur de la République d'Arménie:

7. Գլխավոր վարչությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով հայերեն և օտար լեզուներով պետական կնիք և ձևաթղթեր: Գլխավոր վարչությունը կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

8. Գլխավոր վարչությունն օժտված է օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման և հետաքննության մարմնի լիազորություններով:

9. Գլխավոր վարչության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան 130 հասցեն:

2. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Գլխավոր վարչության նպատակներն են՝

1) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման համար հետախուզվող անձանց հայտնաբերումը, նշված ուղղություններով Գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը.

2) հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի ոլորտում պետական քաղաքականության մշակման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը.

3) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտման ուղղությամբ օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպումն ու իրականացումը, այդ նպատակով Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և ենթակա մարմինների կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության ապահովումը:

11. Գլխավոր վարչության խնդիրներն են՝

1) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կանխման և խափանման, կատարված հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման, ինչպես նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման համար հետախուզվող անձանց հայտնաբերման ուղղությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների կազմակերպումը, իրականացումը և անցկացումը.

2) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտման գործում պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը.

3) Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական և այլ միջոցառումների համակարգումը, արդյունքների ուսումնասիրումը և ամփոփումը.

4) հանցավորության, այդ թվում՝ անդրազգային հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության, ինչպես նաև առանձին ոլորտներով այլ պետությունների իրավապահ մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ փոխհամագործակցության ապահովումը.

5) անհրաժեշտության դեպքում «Ոստիկանության մասին» օրենքով Ոստիկանությանը վերապահված այլ գործառույթների իրականացումը:

3. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Գլխավոր վարչությունը կազմված է կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումներից:

13. Գլխավոր վարչության կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ծայրահեղականության և անդրազգային հանցավորության դեմ պայքարի վարչություն՝

ա. Ծայրահեղականության դեմ պայքարի բաժին,

բ. Անդրազգային հանցավորության դեմ պայքարի և միջազգային կապերի բաժին,

գ. Քրեաբանական վերլուծության բաժին,

դ. Օպերատիվ գործունեության վերահսկման բաժին,

2) Ծանր հանցագործությունների դեմ պայքարի վարչություն՝

ա. Մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

գ. Քրեական միջավայրի հակազդման բաժին,

3) Օպերատիվ արձագանքման վարչություն՝

ա. Հանցավոր խմբավորումների և զինված հանցագործների վնասազերծման բաժին,

բ. Հատուկ մասնագիտական աջակցման բաժին,

գ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող կազմակերպված հանցավոր խմբերի վնասազերծման բաժին,

4) Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչություն՝

ա. Համակարգչային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող հափշտակությունների դեմ պայքարի բաժին,

գ. Համացանցում անօրինական բովանդակության հայտնաբերման և էլեկտրոնային ապացույցների հավաքման բաժին,

5) Օպերատիվ տեղեկատվության ապահովման վարչություն՝

ա. Օպերատիվ-հետախուզական տեղեկատվական համակարգի ձևավորման և շահագործման բաժին,

բ. Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության մշակման և կանխատեսման բաժին,

գ. Օպերատիվ-հետախուզական տեղեկատվության անվտանգության և վերահսկողության բաժին,

դ. Օպերատիվ տեխնիկական աջակցման բաժին,

6) Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչություն՝

ա. Թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող կազմակերպված հանցավոր խմբերի դեմ պայքարի բաժին,

բ. Սինթետիկ թմրամիջոցների պատրաստման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժին,

գ. Բժշկական թմրադեղերի ապօրինի շրջանառության և տարածման դեմ պայքարի բաժին,

դ. Համացանցի միջոցով թմրամիջոցի ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժին,

7) Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչություն՝

ա. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Ֆինանսավարկային և մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

գ. Անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ պայքարի բաժին,

8) Հետախուզության և թրաֆիքինգի դեմ պայքարի վարչություն՝

ա. Անձի հետախուզման բաժին,

բ. Միջազգային հետախուզման և էքստրադիցիայի բաժին,

գ. Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժին:

14. Գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումներն են՝

1) Երևան քաղաքի վարչություն՝

ա. Մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

գ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժին,

դ. Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի բաժին,

ե. Ընդհանուր բնույթի հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

զ. Անձի հետախուզման բաժին,

է. Տեխնիկական աջակցման բաժին,

2) Արագածոտնի մարզային վարչություն.

3) Արարատի մարզային վարչություն՝

ա. Մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

4) Արմավիրի մարզային վարչություն՝

ա. Մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

5) Գեղարքունիքի մարզային վարչություն՝

ա. Մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

6) Լոռու մարզային վարչություն՝

ա. Մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

7) Կոտայքի մարզային վարչություն՝

ա. Մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

գ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

8) Շիրակի մարզային վարչություն՝

ա. Մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

9) Վայոց ձորի մարզային վարչություն.

10) Տավուշի մարզային վարչություն.

11) Սյունիքի մարզային վարչություն՝

ա. Մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժին,

բ. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժին:

4. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

15. Ծայրահեղականության և անդրազգային հանցավորության դեմ պայքարի վարչության գործառույթներն են՝

1) հասարակական և պետական անվտանգության դեմ ուղղված ծայրահեղական դրսևորումներ ունեցող անձանց կամ խմբերի հայտնաբերումը, նրանց կողմից հնարավոր հասարակական կարգի խախտումներով ու զանգվածային անկարգություններով ուղեկցվող հանցագործությունների կանխումը, խափանումը և բացահայտումը.

2) անդրազգային բնույթ կրող հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օտարերկրյա իրավապահ մարմինների հետ համագործակցությունը.

3) այլ երկրների իրավապահ մարմինների հետ սերտ համագործակցությունը, այլ երկրներում ի հայտ եկող նոր տեսակի հանցագործությունների, հանցագործության կատարման նոր եղանակների ուսումնասիրումը, դրանց դեմ պայքարի միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրումը և Ոստիկանությունում նշված ուսումնասիրությունների արդյունքերի ներդնումը.

4) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների քրեաբանական վերլուծությունը, այլ երկրների փորձի ուսումնասիրումը: Առանձին հանցագործությունների դեմ պայքարի նոր մեթոդաբանության մշակումը, կիրառումը, Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների ծառայողներին գործնական ու մեթոդական օգնության ցուցաբերումը.

5) քրեաբանական վերլուծության արդյունքներով կազմված հաշվետվությունների ներկայացումն անցկացվող խորհրդակցություններին, հանցագործությունների կատարմանը

նպաստող պատճառների և պայմանների վերհանումը, քրեաբանական վերլուծության արդյունքներով հանցավորության իրավիճակի գնահատումը, ինչպես նաև դրանց հիման վրա կանխարգելիչ աշխատանքների մշակումը և դրանց տրամադրումը Ոստիկանության այլ ստորաբաժանումներին.

6) հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

7) համագործակցող անձանց հետ տարվող աշխատանքների իրականացումը և համակարգումը, այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

8) Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների ծառայողների կողմից կազմված օպերատիվ հաշվառման գործերի վարման նկատմամբ հսկողությունը և աշխատանքների համակարգումը:

16. Ծանր հանցագործությունների դեմ պայքարի վարչության գործառույթներն են՝

1) Սպանությունների, սպանության փորձերի, ինչպես նաև մարդու դեմ ուղղված այլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքների իրականացումը, այդ ուղղությամբ Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների համակարգումը.

2) Բնակարանային գողությունների, հանցավոր կազմակերպությունների կողմից գողությունների, ավազակությունների, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված այլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքների իրականացումը, այդ ուղղությամբ Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների համակարգումը.

3) քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց, քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների և քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների մասնակիցների գործունեության հակազդման ուղղությամբ միջոցառումների իրականացումը, այդ ուղղությամբ Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների համակարգումը:

17. Օպերատիվ արձագանքման վարչության գործառույթներն են՝

1) հանցագործներին և հանցավոր խմբերին վնասազերծելիս Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումներին աջակցությունը, շենք-շինություններում, տրանսպորտային միջոցներում և այլ իրավիճակներում արագ հակազդման միջոցառումների իրականացումը՝ ներառյալ դեպքի վայրի, հանցագործության գործիքների, միջոցների, իրեղեն ապացույցների անվնաս պահպանումը.

2) անօդաչու սարքերի և այլ հատուկ տեխնիկական սարքերի շահագործումը, դրանց միջոցով հետախուզական տվյալների ստացումը, դիպուկահարների գործողությունների աշխատանքների կազմակերպումը.

3) թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող կազմակերպված հանցավոր խմբերին վնասազերծելու ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացումը՝ ներառյալ դեպքի վայրի, իրեղեն ապացույցների անվնաս պահպանումը:

18. Կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության գործառույթներն են՝

1) համակարգչային համակարգերի և համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բահայատումը.

2) բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող հափշտակությունների, այդ թվում՝ կրիպտոարժույթների միջոցով կատարվող հանցագործությունների, ներդրումային և այլ ոլորտներում կատարվող ֆինանսական մեքենայությունների հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը.

3) «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիայով հաստատված՝ համացանցում առկա անօրինական բովանդակություն պարունակող նյութերի տարածման, այդ թվում մանկական պոռնոգրաֆիայի նյութերի ստեղծման, ստվերային (DarkNet) ցանցում ապօրինի և շրջանառությունից դուրս ապրանքների վաճառքի ու ծառայությունների մատուցման հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը, ինչպես նաև համակարգչային համակարգերի միջոցով էլեկտրոնային ապացույցների հավաքումը, իրավական տեղեկատվության տրամադրումը, դրանց իրականացման նպատակով միջազգային համագործակցության ապահովումը:

19. Օպերատիվ տեղեկատվության ապահովման վարչության գործառույթներն են՝

1) հանցագործություն կատարած անձանց, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց, քրեական ենթամշակույթ կրող

խմբավորումների և քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների մասնակիցների և օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող այլ անձանց, նրանց կապերի, ֆինանսական աղբյուրների, տիրապետման տակ գտնվող գույքի, առկա միջանձնային կոնֆլիկտների, նրանց ազդեցության տակ գտնվող օբյեկտների և կազմակերպությունների վերաբերյալ օպերատիվ-հետախուզական նշանակություն ունեցող տեղեկությունների հավաքումը Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներից, դրանց տեսակավորումը և մուտքագրումը տեղեկատվական պահոցներ.

2) վերը նշված օպերատիվ բնույթի տեղեկատվության վերլուծությունը, դրանց հիման վրա կանխատեսումների իրականացումը և հետագա օգտագործումը հանցագործությունների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտման նպատակով.

3) տվյալների շտեմարաններում օպերատիվ-հետախուզական տեղեկատվության անվտանգ մուտքագրման, պահպանման ապահովումը և Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին տրամադրումը.

4) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման աշխատանքներում Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումներին տեխնիկական միջոցներով ապահովումը, դեպքի վայրում և հարակից տարածքներում առկա տեսանկարահանող սարքերից ձայնագրառումների արտածումը և օգտագործումը:

20. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության գործառույթներն են՝

1) թմրամիջոցների իրացմամբ և ապօրինի շրջանառությամբ զբաղվող անձանց և խմբերի հայտնաբերումը, նրանց գործունեության հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը, այդ ուղղությամբ Ոստիկանության այլ ստորաբաժանումների կողմից իրականացվող միջոցառումների համակարգումը.

2) սինթետիկ թմրամիջոցների պատրաստման ընդհատակյա լաբորատորիաների հայտնաբերումը և նրանց գործունեության կասեցումը, նոր ի հայտ եկած թմրամիջոցների պատրաստման եղանակների ուսումնասիրումը և դրանց ապօրինի շրջանառության հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը.

3) համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը.

4) բժշկական հիմնարկներում բժշկական թմրադեղերի ապօրինի շրջանառության հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը:

21. Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության գործառույթներն են՝

1) կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթուղթ, վճարահաշվարկային այլ փաստաթուղթ կամ վճարային գործիք պատրաստելու, պահելու, տեղափոխելու, առաքելու կամ ձեռք բերելու կամ դրանք իրացնելու դեմ պայքարի իրականացումը.

2) առևտրային, ապահովագրական, հարկային, մաքսային, կենսաթոշակային, ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կամ վարկային պատմությունը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությունն ապօրինի օգտագործելու, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելու դեմ պայքարի իրականացումը, նշված հանցագործությունների հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը.

3) ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու, հեղինակային և հարակից իրավունքի, արտոնագրային իրավունքի խախտման դեմ պայքարի իրականացումը, փողերի լվացման, մասնավոր ոլորտում կաշառք տալու և ստանալու, ինչպես նաև տնտեսական բնույթի այլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը.

4) Հայաստանի Հանրապետության տարածքում անօրինական միգրացիայի կազմակերպման դեպքերի հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը, այդ ուղղությամբ Ոստիկանության այլ ստորաբաժանումների կողմից իրականացվող միջոցառումների համակարգումը:

22. Հետախուզության և թրաֆիքինգի դեմ պայքարի վարչության գործառույթներն են՝

1) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար հետախուզվող անձանց հայտնաբերումը, այդ ուղղությամբ Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների համակարգումը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ օտարերկրյա իրավապահ մարմինների կողմից ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար հետախուզվող, ինչպես նաև այլ երկրներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար հետախուզվող անձանց հայտնաբերումը.

3) Օտարերկրյա իրավապահ մարմինների կողմից հետախուզվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձանց էքստրադիցիայի կազմակերպումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող՝ այլ երկրներում հայտնաբերված անձանց էքստրադիցիայի կազմակերպումն ու իրականացումը.

4) մարդու թրաֆիքինգի, շահագործման, ինչպես նաև հարակից այլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը, այդ ուղղությամբ Ոստիկանության այլ ստորաբաժանումների գործունեության համակարգումը:

23. Գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումների գործառույթներն են՝

1) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտմանն ուղղված աշխատանքների իրականացումը.

2) ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման համար հետախուզվող անձանց հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը.

3) հանցագործությունների վերաբերյալ ստացվող հաղորդումների ընդունումը, գրանցումը և հաշվառումը.

4) Ոստիկանության այլ ստորաբաժանումների հետ տեղերում փոխգործակցության ապահովումը:

24. Գլխավոր վարչության և ենթակա տարածքային ստորաբաժանումների կազմում գործում են հերթապահ ծառայություններ, որոնց գործունեությունը կանոնակարգվում է Ոստիկանության պետի հրամանով:

5. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

25. Գլխավոր վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալը (այսուհետ՝ Ոստիկանության պետի տեղակալ):

26. Գլխավոր վարչության ստորաբաժանումների աշխատանքները համակարգում են Գլխավոր վարչության պետի տեղակալները:

27. Ոստիկանության պետի տեղակալին «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Ոստիկանության պետի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարը:

28. Գլխավոր վարչությանը պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ կարող է տալ Ոստիկանության պետը:

29. Գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումների աշխատանքները ղեկավարում և կազմակերպում են վարչությունների պետերը և տեղակալները, իսկ բաժինների աշխատանքները՝ բաժինների պետերը: Գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումներն ունեն իրենց պետական կնիքը և կանոնադրությունը:

30. Ոստիկանության պետի տեղակալը՝

1) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքներով, «Քրեական դատավարության» օրենսգրքով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով.

2) առանց լիազորագրի հանդես է գալիս Գլխավոր վարչության անունից, ներկայացնում նրա շահերը.

3) հաշվետու է Ոստիկանության պետին.

4) պատասխանատու է Գլխավոր վարչության առջև դրված նպատակների, խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

5) իրականացնում է Գլխավոր վարչության նկատմամբ անմիջական հսկողություն.

6) սահմանված կարգով Ոստիկանության պետի քննարկմանն է ներկայացնում Գլխավոր վարչության աշխատանքների կազմակերպմանը վերաբերող առաջարկություններ, հրամանների նախագծեր, մասնակցում է Գլխավոր վարչությանը վերաբերող հարցերի քննարկմանը.

7) մասնակցում է Գլխավոր վարչության քաղաքականության մշակմանը.

8) հաստատում է Գլխավոր վարչության պլանները և այլ փաստաթղթերը.

9) տալիս է Գլխավոր վարչության անունից հանդես գալու լիազորագրեր կամ այդ լիազորությունը վերապահում է իր տեղակալներից մեկին.

10) Ոստիկանության պետին առաջարկություններ է ներկայացնում Գլխավոր վարչության կառուցվածքի և հաստիքացանկի վերաբերյալ.

11) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Գլխավոր վարչության քաղաքացիական աշխատանք կատարողներին և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց.

12) իր իրավասության սահմաններում ընդունում է լոկալ և անհատական իրավական ակտեր, տալիս պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ.

13) միջնորդություն է ներկայացնում Ոստիկանության պետին Գլխավոր վարչության ծառայողներին պաշտոնի նշանակելու, պաշտոնից ազատելու, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղելու կամ ոստիկանության հատուկ կոչումներ շնորհելու վերաբերյալ.

14) Գլխավոր վարչության ծառայողներին անհրաժեշտության դեպքում գործուղում է, իր իրավասության սահմաններում խրախուսում կամ լուծում է կարգապահական տույժի ենթարկելու հարցը.

15) միջոցներ է ձեռնարկում Գլխավոր վարչության ծառայողների մասնագիտական պատրաստվածության, կատարողական և ծառայողական կարգապահության բարձրացման, պետական գաղտնիքի պահպանումն ապահովելու ուղղությամբ.

16) աշխատանքներ է տանում անձնակազմի համալրման, ուսուցման ուղղությամբ.

17) իրականացնում է Գլխավոր վարչության լիազորությունների կատարմանն ուղղված պարտականությունների բաշխումն իր տեղակալների և Գլխավոր վարչության կառուցվածքային և ենթակա տարածքային ստորաբաժանումների միջև.

18) իր իրավասության սահմաններում ստորագրում է Գլխավոր վարչությունից առաքվող (այդ թվում՝ պետական այլ մարմիններ) փաստաթղթերը.

19) Գլխավոր վարչությունը ներկայացնում է պետական մարմիններում և կազմակերպություններում.

20) Ոստիկանության պետի հետ համաձայնեցնելով՝ իր բացակայության դեպքում Գլխավոր վարչությունը ղեկավարելու լիազորությունը հանձնարարում է իր տեղակալներից մեկին.

21) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

31. Գլխավոր վարչության պետի տեղակալները՝

1) իրականացնում են իրենց ենթակայության տակ գտնվող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը.

2) պատասխանատվություն են կրում իրենց համակարգմանը վերապահված ստորաբաժանումների գործառույթների պատշաճ իրականացման համար.

3) ենթակա ծառայողներին տալիս են պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ, լսում նրանց կատարողական հաշվետվությունները և զեկույցները.

4) ենթակա ծառայողներին ցուցաբերում են անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն, միջոցներ են ձեռնարկում նրանց մասնագիտական պատրաստվածության, կատարողական և ծառայողական կարգապահության բարձրացման, ինչպես նաև պետական գաղտնիքի պահպանման ուղղությամբ.

5) անմիջականորեն կատարում են Ոստիկանության պետի տեղակալի հանձնարարականներն ու ցուցումները.

6) Ոստիկանության պետի տեղակալին առաջարկություններ են ներկայացնում Գլխավոր վարչության գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ.

7) Ոստիկանության պետի տեղակալին առաջարկություններ են ներկայացնում Գլխավոր վարչության ծառայողների ընտրության և համալրման վերաբերյալ.

8) Ոստիկանության պետի տեղակալին ներկայացնում են միջնորդություններ ենթակա ծառայողներին խրախուսելու կամ նրանց կարգապահական տույժի ենթարկելու, արձակուրդ տրամադրելու կամ գործուղելու վերաբերյալ.

9) իրականացնում են իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ: